- ▶ ԶԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Գաթաբ
- ▶ MALLAH - Պալիմ
- ▶ MALLAH - Ժալ Էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցոյ մօտ
- ▶ SAAD - Սար Միայել
- ▶ SPEED - Նահր, «Փեօօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապատթ

ԱՉԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԷՆ 2003 - 2004 ՏԱՐԵՇՐՁԱՆ

2003 - 2004 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ պիտի շարունակուին մինչեւ 31 Յուլիս 2003, ամէն օր (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն) ժամը 8:00էն 14:00:

Նորէն աշակերտները պէտք է ներկայացնեն անձնաթուղթի լուսպատճեն, մախկն մարտարանէ բարի վարուց վկայագիր եւ փձակագրոյ, կրթական նախարարութեան կողմէ վաւերացուած փոխանցագիր եւ 3 լուսանկար:

ՄԱՆԿԱՍՍՈՒՐԻ Կընդունուին 4 ամիսէն սկսեալ մանուկներ:

ՏՄՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ

ԱՖԴԱՆԻՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



Իր ընդարձակ լեզուները և բազմալեզու կայքերով, յաճախ առեւտուրի, ձուլումի, համաշխարհայնացումի, պոստկոմունիզմի հետ առնչուող համացանցը մերթ մեզի կը ներկայանայ գոյություն ունեցող մը, սրտաձուլու եւ քայքայ: Նման տպավորություններ եւ զգացումներ կ'ունենանք, երբ կը հանդիպինք կայքերու, որոնք ընթացողը կ'առաջնորդեն զեպի իր արժանատիքը կամ թեւեր կու տան անոր, արժեքներ կը մատնանշեն:

Այս գոյություն ունեցող կայքերուն շարքին արժէ յիշել «ԱՖ-դանիստանի հայերը, մոռցուած հաւաքականութեան մը պատմութիւնը» խորագրեալ Ֆրանսերէնով պատրաստուած կայքը, որ ունի 8 ենթաբաժիններ:

29 Յունիս 2002ին հրատարակուած այս կայքին «Աշխարհագրութիւն» բաժինը կը ներկայացնէ Աֆղանիստանի քարտէսը:

«Մուտք» բաժինով կը բացատրուի, թէ ինչպէս աֆղանահայերու պատմութիւնը կարելի է բաժնել երեք հանգրուաններու՝ Արշակունցի եւ իշխանութեան հանգրուան, երբ պարսիկներ տեղահան ըրած եւ քշած են մեծ թիւով հայեր, որոնք հետագային հաստատուած են Պարսկաստանի արեւելքը եւ Աֆղանիստան:

Երկրորդ հանգրուանին (14րդ) հայեր փոխադրուած են առաւելարար Գանտահար եւ Քապուլ: Իսկ երրորդ հանգրուանին (1760ական թուականներ) հայեր հեռացած են դէպի այլ երկրներ:


Ռեզլա ցեղախումբի անդամներուն հայկական ծագում ունենալու վարկածը ներկայացուած է առանձին ենթաբաժինով մը: Ենթաբաժիններ տրամադրուած են նաեւ Սպահանէն դէպի Քապուլ հայերու փոխադրութեան: Քապուլի մէջ հայկական եկեղեցիի մը, ինչպէս նաեւ 18րդ եւ 19րդ դարուն աֆղանահայութեան պատմութեան: Կայքի վերջին բաժինը կը պատմէ 300 հայերու մասին, որոնք հաստատուած են Չինաստանի սահմանամերձ շրջան մը:

Կայքը թէեւ համեստ կառույց ունի, եւ անոր բովանդակութիւնը չ'անցնիր տասը էջը, սակայն չի դադիր հետաքրքրական երեւոյթ մը ըլլալէ: www.akaboul.ht.st հասցեով այս կայքը ելեկտրոնային ուղիտատեղի մը կարելի է համարել անոնց համար, որոնք հետաքրքրուած են Ասիոյ կեդրոնը փոխադրուած իրենց հայրենակիցներուն պատմութեամբ:

ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՍԸ ՀԱՄԱՁԱՅՆ

ԱՐՆԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԾԷԹՆԵՐ ՇՓՈՒԹԻ ԿԸ ՄԱՏՆԵՆ ՆԱՆՐՈՒԹԻՒՆԸ

Արհեստագիտական զարգացումները, որոնք աներեւակայելի արագութեամբ կ'որդեգրուին եւ կը համարուին ելեկտրոնային կառնիքներու մէջ, մէկ կողմէ կը գոհացնեն նման սարքերու հետգհետէ առաւել կախեալ դարձած հանրութիւնը, սակայն, միւս կողմէ, իրենց բարդ կառուցով եւ բազմատեսակութեամբ շփոթի կը մատնեն եւ ընդվզում կը պատճառեն արհեստագիտական սարքերու վաճառատուն ոտք կոխած յաճախորդին:




«Չիփ»-ը արտադրող «Ըտվենտ Մայքրո Տիվայսըս» ընկերութիւնը անցեալ շաբաթ հրատարակեց աշխարհի տարածքին կատարուած հարցախույզի մը արդիւնքները, որոնք ցոյց կու տան, թէ մարդիկ յաճախ իրենց հրամցուած արհեստագիտական գերադիտական սարքերէն «կը սարսափին» եւ հետու կը մնան նման սարքեր գնելէ:

Հանրութեան կարիքներուն անտեսումը Մուրհէտ մասամբ կը վերագրէ այն իրողութեան, որ ելեկտրոնային գերադիտական սարքեր պատրաստուած մէկ կողմէ կ'ամրապնդէ այն կարծիքը, թէ յաճախ կ'ենթերկան պատարկութիւնները:

Մեկնարաններու համաձայն, այս բացայայտումը մէկ կողմէ կ'ամրապնդէ այն կարծիքը, թէ յաճախ կ'ենթերկան պատարկութիւնները:

Սակայն կը թուի, թէ ժամանակ մը ետք պարտադիր կերպով սարքերը առաւել պիտի պարզեցնեն: Այսպէս, օրինակ, երբ շուկան յագեցած է համակարգիչներով եւ իւրաքանչիւր տան մէջ համակարգիչ մը գոյութիւն ունի, իրենց արտադրութիւնները վաճառելու համար ընկերութիւններ պիտի դիմեն պարզութեան՝ արտադրելով միեւնոյն աշխատանքը կատարող, բայց աւելի պարզ համակարգիչներ:

«Ըտվենտ Մայքրո Տիվայսըս» ընկերութեան համաձայն, իւրաքանչիւր ելեկտրոնային սարքի ընկերակցող 100 էջնոց բացատրական գրքոյն ու արհեստագիտութեան «բարբառ»ին մէջ օգտագործուած բառերը յաճախ աւելի կը բարդացնեն կացութիւնը: Այսպէս, օրինակ, քէյպլըներու միջոցով արագ կերպով տեղեկութիւններ փոխանակելու արհեստագիտութիւնը կը կոչուի «Ճայրը Ուայթը», եւ տրուած ըլլալով, որ «Ֆայրը» բառը անգլերէնով կը նշանակէ կրակ, տանտիկիներուն սիրտը թունդ պիտի լլլէ նման բառեր լսելով:



Իրատու ընկերութիւնները վաճառու սարքեր, որոնց կարիքը չունի յաճախորդը եւ կամ չի հասկընար անոնց գործածութեան, միւս կողմէ, հարցախույզին արդիւնքները ցոյց կու տան այսօրուան շուկային ընդհանուր մթնոլորտը: Այսպէս, հարցախույզին մասնակցողներուն համաձայն, ամէնէն «բարդ կառնիքները թուագրային լուսանկարչական մեքենաներն ու ակի մէջ բաւող համակարգիչներն են, անոնց կը յաջորդէ «Փի. Սի.»-ն (առտնին համակարգիչ):


«Պլուսթր» բառը գեղեցիկ կը հնչէ, կը բացատրէ Մուրհէտ, սակայն ոչ ոք կը հասկնայ զայն: Եւ կու տայ հետեւեալ յորդորը: «Անցնինք յաջորդ հանգրուանին եւ օգտագործենք բառեր, որոնք հանրութեան ցոյց կու տան սարքերուն գործնականութիւնը»:

«Պլուսթր» բառը գեղեցիկ կը հնչէ, կը բացատրէ Մուրհէտ, սակայն ոչ ոք կը հասկնայ զայն: Եւ կու տայ հետեւեալ յորդորը: «Անցնինք յաջորդ հանգրուանին եւ օգտագործենք բառեր, որոնք հանրութեան ցոյց կու տան սարքերուն գործնականութիւնը»:

Չինաստանի, Ճապոնի, Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներուն շաբաթ մը ըլլալու է, որ արժէ զննել: Ան նաեւ կը բացատրէ, թէ սարքի մը հրատարակուած անմիջապէս ետք յորդորը: «Անցնինք յաջորդ հանգրուանին եւ օգտագործենք բառեր, որոնք հանրութեան ցոյց կու տան սարքերուն գործնականութիւնը»:

«Պլուսթր» բառը գեղեցիկ կը հնչէ, կը բացատրէ Մուրհէտ, սակայն ոչ ոք կը հասկնայ զայն: Եւ կու տայ հետեւեալ յորդորը: «Անցնինք յաջորդ հանգրուանին եւ օգտագործենք բառեր, որոնք հանրութեան ցոյց կու տան սարքերուն գործնականութիւնը»:

«ԿՈՒԿԸԼ»Ի ՄԵԿ ԿԱՏԱԿԸ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՏԵՂԾԷ



Եթէ այցելէք համացանցի վրայ որոնումի հզօրագոյն համակարգը հանդիսացող «Կուկլը» կայքը եւ փնտրութեան տուփիկին մէջ արձանագրէք «weapons of mass destruction» (հաւաքական բնաջնջումի զէնքեր), ձեր դիմաց պիտի բացուին շարք մը կայքերու հասցէներ, որոնց առաջինը խորքին մէջ կատակ մըն է:

Արդարեւ, երբ պարզուած լինքերուն առաջինին վրայ քիչք քիչք, պիտի բացուի ԵՐՈՐԻ ԷՅ մը, որ սովորաբար կ'երեւի, երբ տուեալ կայքի մը հասցէն կարելի չէ գտնել: Սակայն, երբ գոյութեամբ կարողացուի էջը, շուտով կարելի է նկատել, որ այդ պատրաստուած է հաւաքական բնաջնջումի զէնքերու հարցով Միացեալ Նահանգներու ձեռնարկու միտումով: «These weapons of mass destruction cannot be displayed» (հաւաքական բնաջնջումի զէնքեր կարելի չէ գտնել) գրուած է կայքին ճակատը. ապա ներկայացուած են այս գծով շարք մը սրածիտ նկատողութիւններ:


Հինգ ամիս է ի վեր գործող այս կայքը այսօր, աւելի քան երեք, մեծ ժողովրդականութիւն կը վայելէ եւ շաբաթ մէկ միլիոնէ աւելի այցելու ունի:

Կայքը պատրաստած է Անթոնի Քոքս, 34ամեայ բրիտանացի դեղագործ մը, Պիրմինկհամէն: «Այս բոլորը սկսաւ քանի մը բարեկամներու միջեւ եղած կատակով մը, ապա սկսաւ տարածուիլ՝ իր ուրոյն կեանքը ստեղծելով համացանցին վրայ»:

Քոքս բացատրեց, թէ կայքը պատրաստած է ֆետրուարին, իրաքի պատերազմին առաջ, երբ հաւաքական բնաջնջումի զէնքերու հարցը հրատարակ նետուեցաւ: Երբ պատերազմը վեր գտաւ առանց նման զէնքեր բացայայտելու, կայքը սկսաւ մեծ ժողովրդականութիւն վայելել:

Կը թուի, թէ կայքին ժողովրդականութիւնը պիտի չնուազի, տրուած ըլլալով, որ հաւաքական քանդումի զէնքեր գտնելու հաւանականութիւնը անհամեմատ չնչին է:

ՌՈՒՍԱԿԱՆ «ԿՐԷՄԻ» ԿԱՅՔԸ՝ ԵՐԳԵՐՈՒ ԵՒ «ՔԼԻՓ» ՆԵՐՈՒ ՇՏԵՄԱՐԱՆ



Համացանցին երգերու արձանագրութեան կարելիութիւնը ընձեռող կայքեր վերջերս լայն տարածում գտած են եւ փոխարինած՝ «Նէփսթըր»-ի անոր նման համակարգչային ծրագրիները:

Նախապէս այս սիւնակներով անդրադարձած ենք www.mp3shits.com եւ www.mp3sound.com հասցեով կայքերուն, որոնք նորագոյն, ինչպէս նաեւ հին երգեր արձանագրելու կարելիութիւններ կու տան:

Յատկանշական է երրորդ կայք մը, այս պարագային՝ ռուսական, որ շատ աւելի ընդարձակ է եւ կ'ընդգրկէ հզօրահար երգեր՝ այրենական կարգով դասաւորուած:

Այսպէս, www.grammy.ru հասցեով այս կայքի «Էմ.Փի. 3» բաժինով կարելի է արձանագրել երգեր, ինչպէս նաեւ՝ «Վիւնտ քիփ» ենթաբաժինին մէջ գետեղուած բազմատասնակ վիւնտ քիփներ:

Հետաքրքրական է, որ ի տարբերութիւն այլ կայքերու, «Կրէմի» կայքը կը պարունակէ Ֆրանսերէն, ռուսերէն, արաբերէն եւ այլ լեզուներով երգերու հաւաքածոներ: Այսպէս, Քրիսթինա Ակիլերայի երգերուն կողքին այնտեղ կարելի է գտնել Էտիթ Փիաֆի, Ժազ Պրէլի եւ Ում Գուլուամի երգերը...

Պատրաստեց՝ ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Սուրիոյ **AL MOUJIB TRAVEL & TOURISM**ի տըր եւ տնօրէն արն. Ազգամ Չէյուճի, որ միակ ներկայացուցիչն է **ARMAVIA AIRWAYS**ի, համընթաց ուշադրութեան կը յանձնէ, քէ Լիբանանի մէջ իր միակ ներկայացուցիչն է **ASHJIAN TOURS**ը, որմ կարելի է ապահովել Հայկա - Երեւան - Հայկա օդանայի տոմսերը: Տոմսերու գին՝ երբ ու դարձ օդակայանի տարողով, միայն 230 ամերիկեան տոլար, խմբային ձեռնարկութեան պարագային՝ յաւելեալ գեղչ, իսկ միութիւններու՝ յատուկ գեղչ:

Սանրամասնութեանց համար դիմել՝ **ASHJIAN TOURS**, Պուրճ Համուտ, հեռ. 01-261177, 01-240654, 03-233978, 01-259887:

ԿԻԼԻԿԻՄ

ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՏՆԱՇԱՐԷՆ 6 ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

ՄԱՆՈՒԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏՆԱՇԱՐԷՆ

ՍՈՒՆՆԱՆՆԵՐ ԿԱՏՈՒՄԻՆ ԿԱՏՈՒՄԻՆ

ՍՈՒՆՆԱՆՆԵՐ ԿԱՏՈՒՄԻՆ ԿԱՏՈՒՄԻՆ

ՍՈՒՆՆԱՆՆԵՐ ԿԱՏՈՒՄԻՆ ԿԱՏՈՒՄԻՆ

Orient plus
KHABAZ TRAVEL & TOURISM

Touch New Worlds

Zarna

\$319

8 days - Direct Charter Flight
Every Tuesday starting from 8 July

Other Destinations
Boat Trip to Cyprus 3 Days
Cyprus & Greece
\$190 \$425

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT
ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES

01.900598, 901598
03.258336, 256254
www.orientplus.com



Մանկապատանեկան

ԿՈՒՉԷՒՐ ՆՈՐՎԵԿԻԱ ԱՊՐԻԼ



Ըստ ՄԱԿի երկիրներու վերջին դասակարգման, ապրելու ամենին լաւ երկիրը Նորվեգիոյ մէջ է: Այս դասակարգումը հաստատուած է 175 երկիրներ, հետաքրքրուելով անոնց բնակչութեան հարստութեան, կեանքի տեւողութեան եւ ուսումնական հարկերու:

Նորվեգիա ծովուն եւ լեռան միջեւ գտնուող երկիր մըն է: Ան ունի 165,000 լիճեր, եւ իր հողամասին աւելի քան կէսը ծածկուած է լեռնաշղթայով մը: Անոր լեռներուն հովիտները նեղ եւ խորունկ են, եւ անոնց մէջէն կ'անցնին ծովուն ջուրերը: Իսկ այս երկիրը հողին երկրի ծայրին կարելի է տեսնել 900 րժ. անդին գտնուող հիւսիսային բեւեռը:

Եթէ դու ընտելութեան չես սիրեր, չես կրնար մէկ օր մնալ Նորվեգիոյ մէջ: Մինչ ընտելեան ընդարձակ տարածութիւններու սիրահարները պիտի չկարենան հեռանալ մաքուր օդով այս պոփու երկրէն: Նոյնիսկ Օսլո մայրաքաղաքին երեք քառորդը ծածկուած է պարտէզներով եւ ջուրի աւազաններով:

Այս «ընկան» միջավայրին մէջ, մարդիկ կ'օգտուին անտառին փայտէն եւ ծովուն հարստութիւններէն: Ձկնորսութեան «արհեստը» կ'անցնի հորմէ իր օրընուն: Ամէն օր 15,000 ձկնորսներ կ'երթան գործի ծովուն վրայ, եւ իրենց «հունձը» կը ծախեն 150 երկիրներու: Անշուշտ, Նորվեգիան ճանչցուած է նաեւ, որով-

հետեւ կ'որոսյ կէտեր եւ փոկեր, եւ այս երեւոյթը քննադատուած է միջավայրի պաշտպանողներուն կողմէ: Սակայն նոյն ժամանակ, այս վերջինները կը ճանչնան, թէ նոր-վեգիացիները օրինակելի յարգանք ունին բնութեան հանդէպ:

Նորվեգիացիները աղքատ չեն: Ցատկապէս իրենց հողին մէջ գտնուող քարիւղի եւ բնական կազի շահագործումին, անոնք մաս կը կազմեն աշխարհի ամենէն հարուստ ընկերներու խումբին: Անոնք կը սիրեն պարզ բաները, ինչպէս միսի գնդիկներով պատրաստուած ճաշը եւ անտառին մէջ պտոյտները, եւ իրենց մեծ սէրը գահոյնէն, որ ստիպողական ձեռով կը դասաւանդուի դպրոցներուն մէջ:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԱՆԱԻՈՐ ԴԷՄՔԵՐԷՆ՝ ՇԱՐԼ ՓԵՐՈ

Ո՞վ չի ճանչնար կարմիր Գլխարկիկը, Մոխրիկը, Բուլթամատը... Մենք անոնց կը հանդիպինք «Բոնթ տը մա մէր լուա» գիրքին մէջ, որ կը բովանդակէ մանկական գրականութեան ամենէն նշանաւոր ութ գործերը: Իր մահէն 300 տարի ետք գիրքին հեղինակը՝ Շարլ Փերո կը մնայ մանկական գրականութեան ամենէն նշանաւոր հայրերէն մէկը:




17րդ դարուն Շարլ Փերո այնքան յարգուած մտաւորական մըն էր, որուն խօսքերը մտիկ կ'ընէր նոյնիսկ Լուի 14րդ թագաւորը: Ան նաեւ շատ ուշադիր հայր մըն էր, որ առանձին կը մեծցնէր իր 4 զաւակները, իր կնոջ վաղաժամ մահէն ետք: Երբ իրիկուն կ'ըլլար, պոփուները քննադատուած համար ան կը պատմէր սեռուղներէն ի վեր պատմուած պատմութիւններ:

Շարլ Փերո կ'որոշէ այս բերանացի պատմութիւնները գրի առնել, կառոյցի մը մէջ դնել եւ հեքիաթներու վերածել: Ան նախնական պատմութեան զուրս կը ձգէ բոլոր ցնցիչ եւ տհաճ մանրամասնութիւնները. ապա ան պատմութիւնը կը պատշաճեցնէ իր ժամանակի բնկերութեան: Այս ձեւով, օրինակի համար, Մոխրիկի սենեակին մէջ ան կ'աւելցնէ տախտակամածը եւ ապակիները, նիւթեր, որոնք սկսած էին տարածուիլ 17րդ դարուն: Իսկ Բուլթամատին պատմութեան մէջ, ան կը յիշէ 1693 թուականին մեծ սովը, առանց մոռնալու նաեւ միջոցները երգիծանք մը հաղորդելու...

Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող տասը տարբերութիւնները:



Գիտնալով, որ իւրաքանչիւր նշան կը ներկայացնէ տարբեր վայրկեաններու չափ մը, ո՞ր ինքնաշարժը առաջինը պիտի հասնի:


ՄԱՐԴԸ ԵՒ ՇԵՄՓԱՆՁԷՆ ՆՈՅՆ ԸՆՏԱՆԻՔԷ՞Ն ԵՆ

Արդե՞ք շեմփանզէն մարդկային ընտանիքին կը պատկանի: Ըստ ամերիկացի գիտնականներու, շեմփանզէնը եւ մարդոց ծիններուն 99 առ հարիւրը նոյնանրման են: Սակայն բոլոր մասնագէտները համաձայն չեն այս տեսակէտին:

5-6 միլիոն տարիներ առաջ, շեմփանզէնները եւ մարդիկ ունէին նոյննախահայրը: Այս պատճառով, Ուէյն

համալսարանի ամերիկացի մասնագէտները կը մտածեն, թէ երկուքն ալ պէտք է դասակարգուին նոյն տեսակին՝ «Հոմո» ընտանիքին մէջ: Արդ, ներկայիս մարդ արարածը միակ ներկայացուցիչն է այս ընտանիքին: Անցեալին, «Հոմո» ընտանիքը ունեցած է այլ անդամներ, ինչպէս՝ Նէանտերթալի մարդը: Շեմփանզէնները, կորչելու եւ ուրիշ մեծ կապիկներ այլ խումբի մը մէջ դասակարգուած են:

Սակայն գիտնականները իրարու հետ բաղդատած են երկու տեսակներու ծինները: Շեմփանզէնները եւ մարդիկ ունին 99 առ հարիւրը նոյն ծինները: Եթէ ուրիշ գիտնականներ ալ հաստատեն, թէ շեմփանզէնը նաեւ կը պատկանի «Հոմո» ընտանիքին, մեծ բան կրնայ փոխուիլ այս կենդանիներու պահպանման աշխատանքներուն գծով:



Կրնա՞ս ամբողջացնել պատկերը՝ տուփիկներուն հետեւելով:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ գոյութիւն ունեցող 8 անբնական մանրամասնութիւնները:

- «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ի ժԱՄԱՆՅՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
- ԱՌԱԿ - Սէլ ճաղիկով գարուն չի գար: ՇԱՂԻԿԵՐ - 1) վարդ, 2) Սեխակ, 3) Շուշան, 4) Մարգարիտ:
- ՊԱՌՈՒՄ ԲԱՌ - Ար: ՌԱՍԲԱՌ ԹԻՒ 1 - 1) Եկեղեցի, 2) Եղիկ, 3) Պաղպաղակ, 4) Իշուկ, 5) Կապոյտ:
- ՌԱՍԲԱՌ ԹԻՒ 2 - 1) Սեխակ, 2) Արիւս, 3) Շաղկապ, 4) Սուկ:

Պատրաստե՛ք ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ԳԻՏԷՒՐ

● Մարզարիտները: Ըստ հիտու առասպելի մը, Քրիշնա աստուածը «քաղած» էր առաջին մարզարիտը ովկիանոսներուն խորքէն՝ իր աղջկան պսակին օրը անոր նուիրելու համար:

Ընտիր մարզարիտը ուրիշ մըն է, որ անձն է վայրի ոստրէի մը կամ ձկնականջի մը մէջ: Ան կազմուած է սատափի խուկերով:

Ներկայիս մարզարիտներուն մեծ մասը մշակուած է: Այսինքն մարդն է, որ փոքր տարր մը կը գետնէն ոստրէին մէջ, այս վերջինը անոր շուրջ կը հիւստ սատափը, եւ այս ձեւով կը կազմուի մարզարիտը:

● Տիներխուռ: Աւստրալիոյ մէջ ապրիքիները կը շինեն երաժշտական այս գործիքը ծառի ճիւղով մը, որ փորուած է... ձերմակ մը շինուցնելու կողմէ: Տարբեր երկայնքով ճիւղեր տարբեր խաղեր կը յառաջացնեն:

Այս գործիքը նուազելու համար պէտք է տիրապետել շարունակուող շնչառութեան թեքներին. այսինքն պէտք է օդը շնչել թիթով, նոյն ատեն անդադար գործիքին մէջ բերանով օդ ներարկել: Տիներխուռը քսան հազար տարեկան է:

● Սըրֆը: Քանի մը երկվայրկեան սահիլ ալիքներուն վրայ, գիտնալով, որ ի վերջոյ պիտի իյնանք,

բայց՝ մեծ ուրախութեամբ: Ասիկա սըրֆի մարզանքն է:

Անիկա հնարուած է իսրայէլական ովկիանոսի Հաւայեան կղզիներուն մէջ: Ժամանակին սըրֆը փորձ մըն էր, որ կը կատարուէր ընտրելու համար թագաւորը՝ ներկայացած ըրգմաթիւ՝ թեկնածուներուն մէջէն: Սակայն նոյն ատեն անիկա ժամանց մըն է բոլոր խաւերուն համար: Գոյուլթիւն ունին նոյնիսկ սըրֆի շաստուածները:

Սկզբը սըրֆերը փայտէն էին եւ կը կռէին 70 քիլո: Ներկայիս անոնք շինուած են յատուկ կերպով եւ 11 քիլոյէն նուազ կը կռեն:

ԽՈՒՆԱԳԻՐ

ԾԻՐԱՆ ԿԸ ՍԻՐԵ՞Ս

Ահա համեղ անուշեղէն մը, որուն պատրաստութիւնը շատ դիւրին է:

Պէտք ունիս 500 կրամ ծիրան, 60 կրամ շաքար, 60 կրամ կարագ, սաւաղէ խմոր:

Պատրաստութիւն

- 1) Փուր յատուկ ափսէն ծածկէ կարագի պոփու կտորներով: Վրան սրսկէ շաքարը:
- 2) Կէսի բաժնուած ծիրանները շառի ափսէին վրայ, բով-բովի, կորածիւնը դէպի խորքը դարձուած: Վրան դարձեալ շաքար սրսկէ:
- 3) Ծիրանները ծածկէ սաւաղէ խմորով, որ կրնայ պատրաստ գնել: Ափսէին ծայրերը լաւ գոցէ խմորով: Չափահաս մը խնդրէ, որ անուշեղէնը եփի փուռին մէջ 30 վայրկեան (տաքութիւն, թէրմոթա 7):
- 4) Երբ քարքը բիշ մը պաղի, գայն պարպէ ափսէին մէջէն պնակի մը մէջ, ծիրանով ծածկուած երեսը յայտնելով:

Գիտէ՞ր քե՞ - Ծիրանի ծառը գտնուած է Չինաստանի մէջ 4000 տարիներ առաջ: Ան արեւուն տարուբեան վեր ունի անելու համար:



ՄԵԾ ՃԱՄԲՈՐԴ ՄԸ՝ ԱՒԱԶԸ


Ամէն տարի 800 միլիոն թոն անապատի աւազ կը ծածկէ մոլորակին ամբողջ մակերեսը: Այս ձեւով, օրինակի համար, գիտնականներ չինական անապատի աւազ գտած են... Եւրոպայի Ալպեան լեռներուն վրայ:

Անապատի աւազափոշիները անխոնջ ճամբորդներ են: Ձրանսացի գիտնականները կը քննարկեն անոնց նշանակութիւնը այս անապատային մասնիկներուն ճամբան՝ Չինաստանի եւ Ձրանսայի միջեւ:



Անոնք նկատած են, որ 1990ին աւազի հատիկներ օդը թարձրացած են Չինաստանի արեւմուտքը գտնուող Թաքլա-մաքան մեծ անապատին, փոթորիկի մը ազդեցութեան տակ. ապա անոնք օդը շատ բարձրացած են, 5 կամ 7 մ., եւ շատ արագ հովերուն՝ ձեռ-սըրիմներու հոսանքներուն հետ «ճամբորդած» են...

Այդ հովերը «կը շրջին» արեւմուտքէն արեւելք. հետեւաբար փոշիի մասնիկները անցած են իսրայէլական ովկիանոսին, Միացեալ Նահանգներու եւ Ատլանտեան ովկիանոսին վրայէն եւ միայն երկու շաբաթէն հասած են Ալպեան լեռներու ձիւնոտ գագաթներուն վրայ:

Այս երեւոյթը տեղի կ'ունենայ փոշիները կ'իջնեն ցամաքամասերուն վրայ, սակայն նաեւ ծովերուն եւ ովկիանոսներուն վրայ: Այս ձեւով է, օրինակ, որ Սահարայի աւազը մաս կը կազմէ Միջերկրական ծովու «սնունդի շղթայ»-ին: Որովհետեւ աւազը երկաթով հարուստ է, մասնագէտները կ'ենթադրեն, թէ անիկա կ'ուտուի ծովային մանրէակներու կողմէ, որոնք իրենց կարգին կը դառնան ձուկերու կեր:



Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՆՇԱՐ

ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԻՏԻ ՎՏԱՆԳԷ՞ ԱՐՄՍԹՐՈՆԿԸ

Հեծելաքարշար ընդհանրապես եւ Ֆրանսայի շրջափակը յատկապես հետաքրքրական կը դառնայ այն պահուն, երբ հսկաները հետզհետեւ կը սկսին նեղ կացութեան մտնուիլ: Մարզաշխարհին մէջ միշտ ալ հաշտ աչքով չի դիտուիր այսպէս ըսած մենատիրութիւնը, նոյնիսկ եթէ արդար է անիկա: Մրցակցութիւնն է, որ կը փնտռեն մարզատեղերը. միապաղաղ մենաշնորհը, որ իրամբ հետաքրքրական չէ, չի մարտիր մարզատեղերուն կողմէ:

Ահա այս ակնոցով հաւանաբար պէտք է դիտել գերմանացի Եան Ուլրիշի երէկուան բացատրիկ իրագործումը: Ֆրանսայի շրջափակի 12րդ հանգրուանին՝ Կայաքէն Քափ Տէքովէրթ, որ 47 քմ. ժամացոյցի դէմ մրցում մըն էր, Ուլրիշ ոչ միայն հանդիսացաւ առաջին, այլեւ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը գրաւող ամերիկացի Լէնս Արմսթրոնկէն իր 2' 10" ուշացումը նուազեցուց 34"ի: Այսինքն՝ Արմսթրոնկի վրայ 1' 36" «բանալով» ան երէկ յուշեց, թէ կրնայ վտանգել ամերիկացիին տիտղոսը:

Արդ, պէտք է սպասել յաջորդ հանգրուանները, ունենալու համար պատասխանը: Ուլրիշ, որ 1997ին շահած է շրջափակին տիտղոսը, երէկ փաստօրէն յուշեց, թէ ինք տակաւին «մենած չէ», ինչպէս կը խորհէին շատեր: Այդ, անկասկած որ Արմսթրոնկ աշխարհի ներկայ յաւագոյն հեծելանորդն է, սակայն Ուլրիշի նման մարզիկներ եւս երբեք անտեսելի չեն:

Արմսթրոնկ, որ տակաւին կը պահէ դեղին շապիկը եւ իր հինգերորդ տիտղոսին համար կը պայքարի՝ իր անունը ոսկի տառերով արձանագրելու հսկաներու շարքին (ֆրանսացի ժաբ Անթէթիլ, պելճիքացի Լտի Մէրքս, ֆրանսացի Պեռնար Քինո, սպանացի Միկել Ինտուրայիջ, միւնչեւ երէկ կը հանդիսանար գլխաւոր թեկնածուն այս տարի եւս: Սակայն Ուլրիշի երէկուան իրագործումը շրջեց բոլոր քարտերը:

Այժմ պէտք է սպասել, թէ Փիթէնեան յետներուն մէջ տակաւին չորս օր ընթացող շրջափակին Արմսթրոնկ ի՞նչ պիտի կարենայ ընել, տրուած ըլլալով որ ինք մագլցողներուն թագաւորն է եւ ներկայ հեծելանորդներէն ոչ մէկը ունի իր կարողութիւնը այդ իմաստով: Ըստ մեկնաբաններու, եթէ յետնային այս չորս հանգրուանները աւարտին առանց Արմսթրոնկի մեծ իրագործումին, ապա մինչեւ Փարիզ հասնող հինգ հանգրուաններուն, որոնք ընդհանրապէս տափարակ են եւ մանաւանդ նախափերջին հանգրուանը (27րդ) դարձեալ ժամացոյցի դէմ մրցում է Նանթի մէջ, Ուլրիշ կրնայ լրջօրէն վտանգել ամերիկացիին եւ անկէ խլել դեղին շապիկը ու ինք երկրորդ անգամ ըլլալով տիրանալ տիտղոսին:

Այս բոլորին մէջ անշուշտ մեծ դեր ունին նաեւ երկու հեծելանորդներուն խումբերը՝ Եու. Էս. Փոսթըլ եւ Պիանթի, որովհետեւ առանց խմբակիցներու նեցուկին՝ կարելի չէ մեծ իրագործումներ սպասել:

Ահա սակայն այս մթնոլորտին մէջ է, որ այսօրուրէն սկսեալ պիտի ընթանայ շրջափակը, որ պիտի ապրի ու իրեն հետ ապրեցնէ հետաքրքրական ու ելեկտրականացած պահեր, որոնք խորքին մէջ «համն ու հոտն» են մրցումներուն: Ամբողջ «փիլոսոփայութիւն» մըն է հեծելաքարշար, որուն հոգեբանութիւնը կրնան հասկնալ միայն անոր սիրահարները:

ՄԱՐԶԱՍԵՐ

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՅ Շ. Մ. Ը. Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ նախարարութեան իր կեդրոնատեղիին մէջ ընդունեց Շ. Մ. Ը. Մ.Ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբին անդամները, գլխաւորութեամբ՝ Շ. Մ. Ը. Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. ճոնի Արեւեանի եւ խումբին մարզիչ՝ եղբ. Վաչէ Սարգիսեանի:



PhotoRAFFI 03-703161

Հանդիպումին գլխաւոր նիւթն էր լիբանանեան ֆուտպոլը եւ անոր ապագան:

Եղբ. ճոնի Արեւեան Բ. դասակարգի ախոյեանութեան բաժակը նախարար Յովնանեանի յանձնելէ ետք, ըսաւ, թէ խումբը գտած է իր անցեալի օրերը:

Ան դիտել տուաւ, որ այսօրուան մարզիկները իրենց վրայ դրուած յոյսերը իրականացնելու ճամբուն մէջ են:

Եզրափակելով, եղբ. ճոնի Արեւեան նախարար Յովնանեանին

տեղեկացուց, թէ Շ. Մ. Ը. Մ.Ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբը իր մասնակցութիւնը պիտի բերէ յառաջիկայ 16էն 24 Օգոստոս Երեւանի մէջ տեղի ունենալիք Համահայկական 3րդ խաղերուն:

ԼԻԲԱՆԱՆԻ ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ԱՍՈՒՆԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐԸ

ԱՌԱՐՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄԸ՝ Հ. Մ. Ը. Մ.ԱԿԱՆՆԵՐ ՊԱՐԻՔԵԱՆԻ ԵՒ ՔԷԶԷՊԱՇԵԱՆԻ ՄԻՋԵԻ

Մոն Լա Սալի մէջ այսօր՝ կէսօրէ ետք ժամը 4:00ին տեղի կ'ունենայ Լիբանանի փինկ փոնկի ամառնային մրցաշարքին աղջկանց աւարտականի մրցումը, որ պիտի ըլլալ զուտ Շ. Մ. Ը. Մ.Ա. կան:

Երէկ տեղի ունեցան քառորդ աւարտականի եւ կիսաւարտականի մրցումները, որոնց ընթացքին Շ. Մ. Ը. Մ.Ա. կան:

Մ.Ա. կաններ Լիպա Պա-նակներուն շնորհիւ իրքեան եւ Լարա Քէ-չեպաշեան իրենց արձանագրած յաղթա-սը:

Երէկուան մրցումները տուին հետեւեալ արդիւնքները:

ՔԱՌՈՐԴ ԱՌԱՐՏԱԿԱՆ	
Նոէլ Էէշիշեան - Զրիպէլ Ժալըխ	2-3
Լիզա Պարիքեան - Ռանա Մըրըշի	3-0
Լարա Էէչեպաշեան - Թալա Հաուիլա	3-0

ԿԻՍԱՎԱՐՏԱԿԱՆ	
Լիզա Պարիքեան - Զրիպէլ Ժալըխ	4-0
Լարա Էէչեպաշեան - Ղատա Ըլէլլաթ	4-3

ՖՈՐՄԱՒԼԱ 1

ՎԱՂԸ՝ ՍԻԼՎԸՐՍԹՈՆԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Սիլվըրսթոնի մէջ (Բրիտանիա) վաղը տեղի կ'ունենայ Ֆորմալի 1ի 2003ի աշխարհի ախոյեանութեան 11րդ հանգրուանի կրան փրին: 60 լէփ ունեցող չէ 308,5 քմ. երկարութեամբ մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 15:00ին՝ Պէյրուի ժամով:

Վերջին քանի մը կրան փրիններուն ընթացքին արձանագրուած արդիւնքները անելով հետաքրքրական դարձուցին այս տարուան ախոյեանութիւնները, թէեւ

այժմ անիկա կ'ընթանայ ի նպատակ Զեռարիի եւ անոր գերմանացի վարորդին՝ Միքայէլ Շուսալըրին: Ան 64 կէտով այժմ կը հանդիսանայ առա-

ջին, իսկ անոր խումբը 103 կէտով՝ դարձեալ առաջին: 2րդ դիրքին վրայ է Ռիլիքմս (100 կէտով), իսկ 3րդ դիրքին վրայ՝ Մաքլարըն (85 կէտով):

ԺԱՄԱՅՔԱ ՀԱՍԱԻ ԲՈՆՔԱՔԱՅԻ ՔԱՌՈՐԴ ԱՌԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄ

Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցող Քանքաքաֆ «Կոլտ Քաֆ»ի ֆուտպոլի մրցաշարքին Ա. հանգրուանի մրցումներուն, Քոլումպիա 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Կուաթեմալայի հետ, ապահովեց քառորդ աւարտական հանգրուանի իր տուած ժամայայի կողքին: Քոլումպիա իր հաւասարութեան կողմը նշանակեց 78րդ վայրկեանին:

Քառորդ աւարտականի մրցումներուն Քոլումպիա պիտի ունենայ դժուար մրցակից մը՝ Պրայիլը, մինչ ժամայայ Մեքսիքան: Քառորդ աւարտականի մնացեալ մրցումներուն, տիտղոսակիր Միացեալ Նահանգներ պիտի ձակատին Քուալայի դէմ, իսկ Քուսա Ռիքա՝ Սալվատորի դէմ:

Մտորէ՛ չորս խմբակներուն վերջնական դասաւորումը:

Ա. ԽՄԲԱԿ	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԷՏ
1.- Մեքսիքա	1	1	0	1	0	4
2.- Պրայիլ	1	0	1	2	2	3
3.- Նոնտուրա	0	1	1	1	2	1
Բ. ԽՄԲԱԿ						
1.- Քոլումպիա	1	1	0	2	1	4
2.- Ժամայքա	1	0	1	2	1	3
3.- Կուաթեմալա	0	1	1	1	2	1
Գ. ԽՄԲԱԿ						
1.- Մ. Նահանգներ	2	0	0	4	0	6
2.- Սալվատոր	1	0	1	1	2	3
3.- Մարթիքիք	0	0	2	0	3	0
Դ. ԽՄԲԱԿ						
1.- Զուսթա Ռիքա	1	0	1	3	1	3
2.- Զուպա	1	0	1	2	3	3
3.- Զանատա	1	0	1	1	2	3

ԴԵԾԵԼԱՐՇԱԲ. ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱՅՔ

ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԺԱՄԱՅՑՈՅՑԻ ԴԵՄ ՄՐՅՈՒՄԻՆ ԸՆԴՈՒՄԸ



Եան Ուլրիշ՝ փոտիումից վրայ

Ֆրանսայի հեծելաքարշարի շրջափակի 12րդ հանգրուանը, որ տեղի ունեցաւ երէկ՝ Կայաքէն Քափ Տէքովէրթ (ժամացոյցի դէմ մրցում մը՝ 47 քմ.). վերջ գտաւ գերմանացի Եան Ուլրիշի (Պիանթի) յաղթանակով, որ արձանագրեց 58 վայրկեան եւ 32 երկվայրկեան արդիւնք մը:

Ամերիկացի Լէնս Արմսթրոնկ (Եու. Էս. Փոսթալ), որ դարձեալ իր մօտ պահեց դեղին շապիկը, հանդիսացաւ երկրորդ, ժամանան գիծ հասնելով 1' 36" ուշացումով: Երրորդ դիրքը գրաւեց Թեյեքոմի հեծելանորդ Ալեքսանտր Վինքըրով (Ղապիստան), 2' 06" ուշացումով:

Նախքան այս հանգրուանը, Ուլրիշ Արմսթրոնկէն 2' 10" ուշացումով կը գրաւէր ընդհանուր դասաւորման 6րդ դիրքը, սակայն այս յաղթանակէն ետք, ան այժմ կը գրաւէ 2րդ դիրքը՝ 34 երկվայրկեան ուշացումով միայն ետ մնալով ամերիկացիին:

Կանաչ շապիկը տակաւին կը մնայ աւտրալիացի Պէյտրը Քուրի (Ֆէ. Տէ. Տէօ) մօտ, որ ունի 156 կէտ:

Այսօր տեղի կ'ունենայ 13րդ հանգրուանի մրցումը՝ Թուլուզէն Աքս Փլաթօ Տը Պոնապը (197,5 քմ.), իսկ վաղը՝ 14րդ հանգրուանի մրցումը, Սէն Ժորժէն՝ Լուտանվիլ (191,5 քմ.):

ՄԵՆՏԻԵԹԱ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿԱՐԱՉԳԵՅ



Մենտիթա

Սպանացի միջազգային միջնապահ Կայքա Մենտիթա երկու տարիով երկարաձգեց իր պայմանագրութիւնը իր ակումբին՝ Լաքո Ռոմայի հետ: Այսպիսով, ան մինչեւ Յունիս 2008 պիտի մնայ Հռոմի խումբին հետ, յայտնեցին անոր ակումբին պատասխանատուները:

30 տարեկան Մենտիթա, որ երկու տարի առաջ, փոխան 41 միլիոն եւրոյի վայելահայեան միացաւ Լաքոյի, նախքան իր պայմանագրութիւնը երկարաձգելը, համաձայն գտնուեցաւ իր ամսականին քառասուն առ հարիւրին նուազումին, նկատի ունենալով որ Լաքոյի նիւթական նեղ կացութեան մատուցած էր:

Անոր պայմանագրութեան երկարաձգումը քիչ մը անակնկալ եղաւ, նկատի ունենալով որ Լաքոյի կը մտադրէր ծախու հանել իր մարզիկը: Առաջին տարին ան Լաքոյիի հետ վերջապէս հիմնական կապի մաս կապմէլ, մինչ անցեալ եղանակին ան փոխ տրուեցաւ Պարսելոնայի: 2002-2003 եղանակի աւարտին Պարսա չուրեց իր մօտ պահել Մենտիթան:

ՍԱԼԱՍ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ ՌԻՎԸՐ ՓԼԷՅԹ

Չիլիցի միջազգային մարզիկ Մարսելո Սալաս իր ակումբը՝ Եուվենթուսը լքելով միացաւ իր նախկին խումբին՝ Ռիվըր Փլէյթին: 28 տարեկան Սալաս, որուն փոխանցումը արժեք 550 հազար ամերիկեան տոլար, մէկ տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց արժանիքն ան կապի մէջ:

1998ին Իտալիա մեկնելով, ան մաս կապմէց Լաքո Ռոմային, ապա միացաւ Եուվենթուսին (2001ին):

1996 - 97 եղանակին, Արժանիքի ֆուտպոլի ախոյեանութեան մրցումներուն իր մասնակցութիւնը բերած Սալասը հետաքրքրուած էր Չիլիսին:

Փ. Ս. ԺԵՐՄԷՆ ԲԱՐՏԵԹԹԻՆ ՓՈԽ ՏՈՒԱԻ ՍՈՍԻԵՏԱՏԻՆ՝ ԻՍԿ ՓՈՔԵԹԻՆՈՆ՝ ՊՈՐՏՈՅԻՆ

Փարիզ Սէն ժերմէնի մաս կազմող արժանիքիցի յառաջնապահ Մարթին Բարտեթթի յառաջիկայ եղանակին համար փոխ տրուեցաւ Ռէալ Սոսիետայի:

27 տարեկան Բարտեթթի, որ անցեալ եղանակին մայրաքաղաքի կազմին հետ նշանակեց եօթ կոլ, 1998-99 եղանակին Սպանիոյ մէջ դաշտ ներկայացած է, երբ մաս կը կազմէր Սալամանքայի:

Նախքան Բարտեթթիի Սոսիետատ փոխ տրուիլը, Փարիզ Սէն ժերմէնի մաս կազմող այլ մարզիկ մը եւս՝ արժանիքիցի միջազգային յետապահ Մառքիցի Փոքթիւնօ փոխ տրուեցաւ Պորտոյի:

31 տարեկան Փոքթիւնօյի համար, թէեւ եւրոպական բազմաթիւ ակումբներէ անաչարակներ ներկայացան, սակայն ան նախընտրեց միանալ Պորտոյի, 2003-2004 եղանակին անէն գնով անոր հետ Ֆրանսայի ախոյեան հանդիսանալու ակնկալութեամբ:

Նշենք, թէ ան երկու տարի առաջ Էսփանիոլէն միացաւ Փարիզ Սէն ժերմէնի:

